232·9
7-30

232.9
Ա-30

169

7/1

Հայր Սրբոյն Գրիգորիսի
տօնին Սուրբ պատարագին
Սանդոյ
2-3-1973

2004

Սուրբ Սանդուխտին 45 տարեկան
8-12-1972 Գ.Բ.

69-47

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ՄԱՐԻԱՆԵԱՅ ԿՈՒՍԻՆ։

Յորում են այլ ևս ընդարձակագոյն հոգևոր։

Ի՞սն խոնարհութեան ոգոյն եփրեմի, Ի՞ղձումն, Պատանութի, Ուսեալ ցեղն, Հաւատով խոստովանիմն, Ի՞զղթք նարեկացւոյն, և Ի՞ւեռարանք բժշկութեան։

ՏՊԱԳՐԵԱԼ

Ի Պատրիարգութեան մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Տէրն Կարապետի ամենապատիւ և վեհափառ Ի՞ւք Եպիսկոպոսի։

1827 ՅՕՐԹԱԳԻՒԴ ՌՀԷ

Ի Տպարանի Պօղոսի արապեան ապուշեխցւոյ։

## Ա. Ի ՆԵՐԵՑՈՂՆ։

ԱՐԹԷ ԸՆԹԵՌՆՈՒՍ ՄԻԱՆԳԱՄ ԵՎ ԷԹ ԶՀԻԱՆԱԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՆ ՍԲՅ ԿՈՒՍԻՆ Ս՝ԱՐԻԱՆԵԱՅ՝ ՈՎ ԸՆԹԵՐՑՈՂ, ԼՍՔԱՆՉԱՑԵԱԼ ՎԱՐՄԱՆԱՍ, ԹԷ ԽՐԱԿԻՍԻ ԶՕՐՈՒԹԷՆ ՅԱՂԹԵԱԼ ԻՑԷ ԱՍԱ ԵՎ ՀԵՐԲԱԿԱԼ ԱՐԱՐԵԱԼ 'Ի ՆԵՐՔՈՅ ՈՍԿԻՑ ԻՒՐՈՑ ԶԻՇԽԱՆՆ ԴԻՒՑԱՑ ԶԱՏԱՆԱՅ։

ՈՐ ԵՎ 'Ի ՅԻՇՄԱՆԷ ԱՆՈՒԱՆ ՄԻԱՅՆ ՍԲՅԱ ՀԱՒԱՏՈՎ՝ ՀԱԼԱԾԱԿԱՆ ԼԻՆԻ. ԵՎ ԿԱՏԱՐԻՆ ԼԻՆԴԻՐՔ ՍՐՏԻՑ ԲԱԶՄԱՑ. ԹՈՂԹԷ ՅՈՐԺԱՄ ՊԱՀԷ ՈՐ 'Ի ԾՈՅԻ ԻՒՐՈՒՄ, ԵՎ ԿԱՄ 'Ի ՏԱՆ ԶԼԻԱԿԱՏԱՐ ՊԱՏՄՈՒԹԻՆ ՍՈՐԱ, ԵՐԲԵՄՆ ԸՆԹԵՌՆԼՈՎ. ԵՎ ԿԱՄՈՒՆԿՆԴՐՈՒԷ ՍՐՏԻ՝ ԼԵԼՈՎ 'Ի ՅԸՆԹԵՐՑՈՂԱՑ. ՈՐ ԻԲՐԵՎ ԶԳԱՆՁ ՊԱՀԵԼԻՆԷ։ ԵՒ ԹԷ ԶՈՐ ՀԱՅՑՈՒԱԾ ՈՒՆԻ 'Ի ՔՆԷ ՎԵ ՏՕՆՈՂԱՑ ԸՆԹԵՐՑՈՂԱՑ ԳՐՈՂԱՑ ԵՎ ՊԱՀՈՂԱՑ ԼԱՒԻՑԱՏԱԿ ԻՒՐ, ԿԱՐԴԱ

ԵՎ ԱՌԵՍ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZU.N. ԳՍՌ ՍՍՀ
Ս. ՄԱՍՏՈՑԻ ԱՆՎԱՆ
5109-ա/ն
3922-73

Սրբուհին Մարիամէ։

# ՎԱՐՔ

## ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### ՍՐԲՈՅ ԿՈՒՍԻՆ

## ՄԱՐԻԱՆԵԱՅ

Յետ յարութեանն մերոյ և փրկչին յԻ-քի՝ և փառաւոր վերանալոյն յերկինս, և գալստեան հոգւոյն Սրբոյ յառաքեալսն, որք քարոզեցին զբանն կենաց, և հալածեցին զդիւապաշտ մոլորութիւն յաշխարհէ, և լուսաւորեցին զոգիս մարդկան ճշգիտութեամբն. որ և ես ծառայս քի. ելի 'ի խաւարէ և եկի առ լոյսն քո. և լուսաւորեցայ նորին գիտութեամբ լուսոյն։ Այս արդ՝ պատմեմ հաւատացելոցն՝ զվկայաբանութիւն սրբոյն մարիանեայ, և զնամ սքանչելիսն՝ զոր

արար նա յանտիոք քաղաքի։ այլև՝ զծնունդ և զնունդ նորա որ 'ի տղայութեան և զկատարումն։

Եւ եբն մարիանէ մեծի զաւակ։ և ետ հայրն նոր զնա յուսումն արտաքին գրոց։ և հեռացոյց զնա 'ի քաղաքէն։ ժդ։ մղոնաւ։ և շինեաց նմա սենեակ գեղեցիկ։ և ոչ է մուտ այր առ նա՝ և ոչ ել։ Եւ կանգնեաց նմա հայրն նոր կուռս։ և մնանէր մարիանէ յարգելանի անդ։ և կային ծառայքն նմա 'ի սպաս։

Եւ յորժամ իմաստնացաւ և զարգացաւ եբն մարիանէ, ետես լոյս ծագեալ ընդ պատուհանն, զարմացաւ՝ զի ոչ էր այլ տեսեալ։ և ասէ՝ նա՛ է ՀԱԾ որ զլոյսս զայս արարեալ է։ նա՛ է արարիչ երկնի և երկրի։ և ստեղծիչ ամենեցուն։ և ես երկիրպագա նեմ նմա և այլ ոչ պաշտեմ զկուռս չքնաղս որք են ձեռագործ որդւոց մարդկան։ Եւ ասէ եբն մարիանէ՝ Աստուածիմ ես զՀայր և զորդի և զՀոգին եբ։ Եւ լուաւ հայրն նոր, և ատէր զնա։ և վն գթոյն հայրականի՝ ոչ նեղէր զնա 'ի պաշտօն կռոցն։

Եբրև եղև երանելին մարիանէ ժդ։

ամաց , և ուսանէր զիմաստութիւն . և իբրև
լսէր երանելին զչարչարանս քրիստոնէիցն
որ զբազումս չարչարէին վասն անուանն քրիստոսի ,
յաղօթս եկաց և ասաց . Տէր՝ դու գիտես
զմարդկային բնութիւս որ տկար է . վասն մար-
դասիրութեան քոյ՝ գթա յիս տէր և զօրացո
զիս . զի և ես կցորդ եղէց նոցա . և քեզ փառք
յաւիտեանս : Եւ յայնմ հետէ ծագեաց
շնորհք աբ հոգւոյն 'ի սիրտ նր . և զայս
իւր 'ի քո հաստատեաց ոբն :

Յայնժամ անօրէն թագաւորն դիոկղէ-
տիանոս առաքեաց զլիպրիանոս իշխանն բա-
զում զօրօք յանտիոք . և ասէ՝ գնացէք
տանջեցէք զքրիստոնեայսն . և արեամբ նոցա
ներկեցէք զպարիսպ քաղաքին . և եկն եհաս
լիպրիանոս անօրէնն 'ի քաղաքն անտիոք , և
եհար զվրանն իւր յերզը քաղաքին :

Եւ ոբն մարիանէ՝ էր գնացեալ 'ի տուն
ազգի իւրում . և ելեալ երթայր 'ի սենեակ
իւր . և ընդդէմ հանդիպեցաւ նմա անօ-
րէնն լիպրիանոս . և տեսեալ զվայելուչ
դէմ նր , ցանկացաւ նմա . և ասէ՝ ածէք
զնա առիս . թէ աղատ է , կին առնեմ զնա .
և թէ ծառայ , գնոց գնեցից զնա . և ինձ
աղախին արարից :

Եւ յորժամ կալան զնա՝ սկսաւ նբն ա-
զաչել զնա զուարթ երեսօք. և ասէ, ողոր-
մեսա ինձ ՝ն, և մի՛ տար կորուսանել զհո-
գի իմ. և մի՛ տար ՝ի ձեռն մարդասպանին
զանձն իմ. և մի՛ ընկենուր ՝ի շաղախումն.
և տալ ապականել զկուսուհիս իմ անօրինին.
որ ոչ կեղծաւորին լսելիք իմ. և ոչ թուլա-
նայ բնուհիս ՝ի չարէն. և ոչ դրդռմի խոր-
հուրդս իմ ՝ի թշնամւոյն։ Փրկիչ արարա-
ծոց՝ որ իմ յա՛ քո՝ առաքեա զհոգիդ նբ.
ոմանք ինձ իմաստուն խօսիլ առաջի թշնա-
մեաց իմոց. և տուր ինձ զօրուն ոգի զօրա-
ւոր մանկան. և զօրացո զիս՝ որ՝ որ անահ
և աներկիւղ առնեմ պատասխանի, որ խօ-
սի ընդիս անօրէն բռնաւորն. և ըմբռնէ
զանձն իմ։ Ա.հա կամ ես ոգի զոչխար ՝ի
մէջ գայլոց. որ իմ յա՛ քո՝ օգնեա՛ ինձ. և
քեզ փառք յաւիտեան։

Յայնժամ կալան զնբն մարիանէ, և ա-
ծին զնա առաջի դատաւորին. և ասեն, ոչ
է աղջիկս ՝ի յազգէս մերմէ. այլ հաւա-
տոյ ՝ի քո՝ զոր հրեայքն խաչեցին. և դա-
տաւորն յոյժ տրտմեցաւ և ասէ, յո՞ր ազ-
գէ ես. պատասխանի ետ նբն մարիանէ և

ասէ , ես քրիստոնեայ եմ և 'ի մարդկանէ կոչիմ մարիանէ • ասէ լիսլրիանոս , զոր ՝ն ծ պաշտես • ասէ ՝նբն մարիանէ , զարարիչն երկնի և երկրի ։ Դատաւորն ասէ՝ յուսան դու յանուն նաղովրացւոյն • ասէ ՝նբն մարիանէ , յուսամ 'ինա այո՛ յուսամ 'ինա • զի կարօղէ փրկել զաղախինս իւր յորոգայթից սատանայի ։

Եւ հրամայեաց դատաւորն զօրականացն պահել զնա • և անօրէնն եմուտ 'ի քաղաքն , զի զկուռսն զօրացուսցէ և զարդարեսցէ , և զթագաւորն գովեսցէ , և ըզքրիստոնեայսն սպանցէ ոչ զոչխար , և օծցէ արեամբ նց զպարիսպ քաղաքին ։ Եւ նստաւ դատաւորն յաթոռ , և հրամայեաց ածել զերանելին մարիանէ առաջի իւր • ասէ դատաւորն , ողորմեա՛ մանկուն՝ քում , և խնայեա՛ 'ի դեղ պատկերի քոյ • զի լաւ է քեզ որ ցանկալի լինիս ամենեցուն ։

Պատասխանի ետ ՝նբն մարիանէ և ասէ • գիտէ ՝որն իմ յ՝ն՝ քն , որ ո՛չ կարեմ փոխել զբնուի իմ յանօրէնուիս քո • զի առաքեաց ՝նր զզօրուի իւր առ իս • զօրացոյց զիս զզրուիթբ ՝նբ հոգւոյն • զի զանձն իմ մատու-

ցից պատարագ երկնաւոր Թագաւորին։
Զսկ դատաւորն՝ բազում տանջանօք կո-
րուսանեմ զքեզ եթէ ոչ լսես ինձ և հա-
ւատաս յաւծն իմ. և եթէ լսես ինձ, Թա-
գուհի առնեմ զքեզ. և երանիս դու յա-
մենեցունց. և աղատիս յառաջիկայ տան-
ջանացդ։

Զբն մարիանէ ասէ. ոչ երկնչիմ 'ի տան-
ջանաց քոց. զի հոգի իմ հաստատուն կայ
առ ուծ. և ես կամաւ իմով տամ զանձն իմ
'ի տանջանս. զի եթէ մարմինս ոչ տանջի,
հոգիս ոչ մտանէ 'ի հարսանիս երկնաւոր
փեսային ընդ իմաստուն կուսանսն. քա-
զանձն իւր վա՜ մեր պատարագ մատոյց. և
ես պատրաստ եմ 'ի վկայութիւն ն՜ր. զի նա
կնքեաց զամ զգայարանս իմ ոբ խաչիւն
իւրով։

Իսկ անօրէնն լիպրիանոս՝ հրամայեաց
զերանելին մերկացուցանել և տանջել եր-
կաթի գաւազանաւ. և տանջէին անողորմ.
իսկ ոբն առ ոչինչ համարեալ զտանջանսն,
ամբարձ զաչս իւր յերկինս և ասէ. որ
ուծ իմ 'ի քեզ յուսացայ, մի՛ յամօթ առ-
նէր զիս, և մի՛ ծիծաղեսցին զինև թշնամիք
իմ.

իմ. նայեա՛ յիս ՝որ՝ և փրկեա՛ 'ի ձեռաց ա-
նօրինաց . զի դու ես իմ յոյս և ապաւէն
փրկիչ իմ։ Ասէ դատաւորն . հրամանաւ
իմով տանջեցաւ անձն քո գեղեցիկ . արդ
եթէ լսես ինձ և հաւատաս յաւծն իմ, ես
բերեմ բժիշկ՝ որ ողջացուցանէ զմարմինդ
քո։

Ասէ ՝ոբն՝ չար խորհուրդ խորհեալ ես .
ոչ է պիտոյ բժշկուի մարմնոյ իմոյ . զի իմ
բժիշկն քո՛ է՝ որ հոգւով և մարմնով զքեզ
յամօթ առնէ կատաղի շուն կոյր և յի-
մար . զի եթէ անձն իմ ոչ տանջի , հոգի
իմ ոչ պսակի յերկնաւոր թագաւորէն .
դու ընդէ՞ր ոչ հաւատաս յաւծն իմ՝ որ փրը
կէ զքո հոգիդ և զմարմինդ յանշէջ հրոյն
և յանքուն որդանցն . բայց ես ասեմ քեզ ,
զի կռոց քոց ես երկիր ոչ պագանեմ . զի
ձեռագործ են որդւոց մարդկան . և բնա-
կարան պիղծ դիւաց . և դու կամարար
սատանայի . այլ ես հաւատամ 'ի ՝որ յա՛ քո՛ . որ
կարօղ է փրկել զհոգի և զմարմին իմ 'ի
ձեռաց քոց պիղծ և գարշելի գազան . թէ-
պէտ և դու չարչարես զմարմինս , այլ յա-
ւուր գալստեան ՝ոն մերոյ և փրկչին յի քի

փառաւորի հոգիս իմ անանց պսակաւն։

Յայնժամ դատաւորն բարկացաւ, և հր
ամայեաց զերանելին կախել 'ի ստեանց,
և երկաթի քերչօք քերել զմարմինն. իսկ
նա ասէն համբարձ զաչս իւր յերկինս և ասէ,
շուրջ եղեն զինև շունք բազումք. և գա
զանք անապատի պաշարեցին զիս. և անօ
րէնք անողորմ չարչարեն զիս։ Արդ ես 'ի
քեզ ապր յուսացայ. օգնեա՛ ինձ փրկիչ իմ.
նայեա՛ յիս և փրկեա՛ զիս 'ի բերանոյ ա
ռիւծոց. ապր ապ իմ տուր ինձ զօրութի,
և լուր աղօթից իմոց. և առաքեա՛ զհոգիդ
ոբ առ իս. և պահեա՛ զանձն իմ 'ի շաղախ
մանէ անօրինիս, և պարսպեա՛ ամենակարող
զօրութ քո զանձն իմ զի յաղթեցից անօ
րինիս այս՝ որ նեղէն զիս. զի ոչք յուսան
յանուն քո ապր՝ մի՛ ամաչեսցեն յաւիտեան։

Իսկ տանջողքն զարմանային ընդ համ
բերութի նոցին, և ասեն ցդատաւորն. սա որ
արհամարհեաց զհրամանս քո՝ ոչ կայ այլ
տեղի ողջ 'ի մարմնի նոր. յայնժամ գաղտ
արտասուէաց անօրէնն, և ասէ. մարիանէ՝
ոչ լուար հրամանաց իմոց. ոչ ողորմեցար
մարմնոյ քում. արդ ողորմեա՛ց քեզ. և եր

կիր պագ չամոց իմոց։ ապա թէ ոչ երկիր
պագանէս, կտրատեմ զմարմինդ քո՝ և մե-
ռանիս անարգ։ Պատասխանի ետ նոքն և
ասէ։ ով կորուսեալ և կուրացեալ յիմա-
ցուութիւն՝ ի ձշմարիտ լուսոյն։ թէ անձին ի-
մոյ խնամ ածեմ, հոգիս իմ ոչ պսակի։
Յայնժամ ասէ դատաւորն։ տարէք զդա-
՝ի խաւարը բանտ մի նեղիր ինՀ՝զի անդէն մեռ-
ցի։ և առեալ տարան զնա՝ ի բանտն։ և
դրոշմեաց նոքն մարիանէ զնամ զգայարանս
իւր խաչանման և ասէ։ որ ՀՀ՝ որ ստեղ-
ծեր զնամ արարածս յոչընչէ, և դողան եր-
կինք և երկիր յահէ զօրութեանդ։ որ զկա-
պեալսն արձակեցեր, և զսգնոյ յամօթ արա-
ր։ որ անյուսից յոյս էս, և որբոց հայր և
այրեաց դատաւոր։ քո՝ ՀՀ՝ ցոյց ինձ զզօ-
ր՝ի քո։ և ողորմեա՛ աղաչանաց քում։ զի
՝ի հօրէ իմմէ մերժեցայ։ և դու էս հայր
՝ի՝ մ և մայր՝ որ՝ ՀՀ՝ իմ։ ՝ի քեզ յուսամ զի
դու էս յոյս կենդանեաց և մեռելոց փրկ-
կիչ աշխարհի։ արա՛ դատաստան ընդ իս և
ընդ սգնոյ և ընդ կամարարս նորա։ զի յոյժ
նեղեալ եմ էս՝ ՝ի բազում վշտաց ասաի։
բայց զՀոգիս իմ քեզ յանձն առնեմ՝ ՀՀ՝
իմ։

իմ. մի՛ թողուր զիս զի կորիցէ հոգի իմ
և թուլացի մարմին իմ և զարհուրեսցի
յանօրինացս. քեզ և փառս մատուցանեմք
այժմ և յաւիտեանս ամէն։

Այս դիմեարիանոս ծառայ ՅՍ գնացի 'ի
պատուհան բանտին և ունկն դնէի աղօ-
թից ՅԲՆ, և յանկարծակի ելեալ այր մի 'ի
բանտէն, և հեր նր ոչ գազան վիշապի, և
փայլատակունք յաչաց նր հատանէին. և 'ի
ժանեաց նր կայծակունք. և 'ի բերանոյ նր
ելանէր ծուխ ոչ 'ի հնոցէ. և ելից զբանսն
որպէս բալ։

Այլ ՅԲՆ մարիանէ զարհուրեալ յերե-
սաց նր, եդ ծունր և եկաց յաղօթս առ
ՅՍ և ասէ. ՅՍ ՅԾ՝ որ լուար ձայնի իմում
և ցուցեր ինձ զթշնամին իմ. և արդ՝ ա-
ղաչեմ զքեզ ՅՍ իմ տուր ինձ զօրութի՝ զի
յաղթեցից սմա որ կամի կորուսանել զիս։
Որ անիմանալիդ և անտեսանելիդ ես ՅԾ՝
յորմէ դողան երկինք և երկիր և սանդա-
րամեալք. որ եդեր սահման ծովու և ցա-
մաքի և ՅՍ ի նս, և ոչ անցանեն զհրա-
մանաւ քո ՅՍ. որ կոխեցեր զգլուխ վիշա-
պին 'ի յորդանան. և այժմ խորտակեա՛

զզօրուի սորա. զի մի՝ տիրեսցէ հոգւոյ իւ
մոյ. այլ ամենակարօղ զօրութիւն քո՝ օգնեսցէ
ինձ. զի յաղթեցից սմա, որ կլանել կամի
զիս և տանիլ յանդունդս դժոխոց։

Եւ յորժամ երանելին ասաց զաղօթս
զայս, եբաց վիշապն զբերան իւր և եկուլ
զնա մարիանէ. իսկ նա խաչանշանն տարա
ծեաց զձեռս իւր 'ի փոր վիշապին՝ և ասէ.
յո՜ քո՜ որդի՜ ՝այ. որ ի՜ջեր 'ի դժոխս և ա
ւերեցեր զնա խաչիւդ քով սրբով, որ զսայ
կոխեցեր և զարգելեալսն 'ի նմանէ ամբողջ
և անարատ փրկեցեր, և այժմ աղաչեմ զքեզ
՝՝՝

մենեւին 'ի փորձուն չարքն։ Եւ սկսաւ ա-
սել նոքն, զոհանամ զքէն որ մեր յա՛ քա՛։
և փրկիչ աշխարհի։ օրհնեալ և փառա-
ւորեալ է անուն քո անմահ Թագաւոր, վեմ
անկեան, և սիւն հաստատուն։ խարիսխ
հաւատոյ, և առաջնորդ կենաց և Թագա-
ւոր հրեշտակաց։ Մի՛ սասանեսցի միտք իմ։
այլ տուր հաստատութի անձին իմոյ։ զի
տեսի զվիշապն կործանեալ 'ի վր երկրի։
Ա՜ այսորիկ փառաւորեալ ես յաւիտեան՝
Թագաւոր անմահ, վեմ և հաստատուն ա-
մենեցուն, և պարիսպ ամրուն։ զաւազան
յաղթուն և պսակ մարտիրոսաց, և ապա-
ւէն իմ որ ած օրհնեալ յաւիտեան։

Եւ յորժամ կատարեց զաղօթսն, յար-
եաւ դէմն և կալաւ զձեռն մարիամեայ։
իսկ նոքն կալեալ զհերաց նր, եդ զաջ ոտն
'ի վր պարանոցի նր։ և առեալ մուրճ, ջար-
դէր զգլուխ նր՝ և ասէր։ Երթ 'ի բաց յի-
նէն լիրբ շուն։ ես բնակարան քի եմ, և
սիրելի ա՛յ։ և անուն իմ գրեալ է 'ի դպրուն
կենաց։ Եւ իբրև զայս ասաց, յանկարծա-
կի լոյս ծագեաց 'ի բանտին։ և երևեցաւ
նոքա խաչն քի յերկրէս յերկինս հաստատեալ։

և աղաւնի մի սպիտակ 'ի վերայ գլխոյ նոր։ և ասէ ցոքն մարիանէ, ով՝ որ զվիշապն սպա-
նէր և զժանիս փշրեցեր և զկուսուրի քո անարատ պահեցեր, ահա պատրաստեալ է քեզ պսակ փառաց։ և բաց է քեզ դուռն դրախտին։ զի հանգիցես 'ի գոգն աբրա-
համու, վասն զի յաղթեցեր թշնամւոյն։

Այս ասէ մարիանէ՝ գոհանամ զքէն ո՛ր յիս քն, որ համբերու�քդ կեցուցեր զմեղաւորս։ և քո քաղցրութեանդ բժշկեցեր զվէրս իմ։ արդ փառաւորեմ զքեզ՝ որ ոբ-
ես և 'ի ոբսն հանգուցեալ։ քաղցր և բա-
ղերար ո՛ր։ և օրհնեալ է անուն քո յաւի-
տեան։ Այս անդէն խօսեցաւ աղաւնին, և ասէ։ զոր ունիս ընդ ոտիւք քո՝ հարց և պատմեացէ քեզ զնա՝ վասն գործոց իւրոց։
Այս մարիանէ ասէ ցդևն։ զի՞նչ է անուն քո ով պիղծ։ և դևն ասէ։ բէեղզեբուղ իշխան դիւացս։ և ոբն ասաց։ ոչ է ծը-
նունդ քո, կամ ուստի՞ է սկիզբն քո։ և դևն ասէ։ ով աղախին քի՝ թեթևացո՛ զոսն քո 'ի պարանոցէ իմմէ։ զի փոքր մի հան-
գեայց և պատմեցից քեզ զնա։

Իսկ մարիանէ թեթևացոյց զոսն իւր 'ի

պարանոցէ դիւ՛ին. և ասէ դևն՝ ես եմ սո-
ղուն նենգաւոր որդի նենգուէ. հրեշտակ
էի յերկինս. և խռովեցուցի զարարիչն. և
ընկէց զիս 'ի փառաց իմոց. և զչարն իմ
անթիւ։ Եւ ես զադամ պատրեցի. զևա
խաբեցի՝ և հանի զնա 'ի դրախտէն. զաշ-
խարհն ընդ անիծիւք արարի. կայենի՝ զեղ-
բայրն սպանանել ետու. և որդւոց նոցա
պոռնկիլ ընդ դստերացն կայենի. և յորի-
նեցի զկանայս 'ի մնկուրս, և 'ի ծարուրս
և 'ի զարդս ոսկւոյ և արծաթոյ, 'ի հիւսս
և 'ի ծամակալս և 'ի քծնուիս. մինչև բար-
կացաւ ած՝ և ջրասոյզ կորստեամբ ապա-
կանեաց զերկիր. բորբոքեցի զսոդոմեանսն
'ի գործս չարուէ, մինչև անկաւ հուր և
կործանեաց հրակիզմամբ. ախտացուցի
զյուդա արծաթսիրուք, և ետու մատնել
զյն 'ի մահ խաչին. մոլորեցուցի զմարդիկ
'ի կուռս ձեռագործս, և խափանեցի զպաշ-
տօնն ՝այ. մտանեմ 'ի սիրտ մարդոյ, և գե-
րեմ զնա չար ցանկուք. օտարացուցանեմ
զնոքա ամուսնուին, և տամ պոռնկիլ յօտար
անկողին. խողխողեմ զմանուկս յորովայնի,
և հեղձուցանեմ 'ի ծնունդս. արկանեմ

զքունս յաչս կանանց, և ըստեամբ սպա-
նանել տամ զմանկունս՝ և'ի հուր արկանեմ։
կուրացուցանեմ զաչս արանց և կանանց,
արկանել'ի տոռունս և խեղդել զինքեանս՝
'ի քար ընկենուլ կամ'ի գետ. գաղանա-
ցուցանեմ զսիրտ մարդկան, զի անարգեսցեն.
և սպանանեմ զաղքատն. և ոչ տամ
ողորմիլ. և'ի ձեռս տրանջալոյն՝ անշահ առնեմ
յողորմուէն. ցնորեցուցանեմ զմիտս
աղօթականին. կամ քնով դանդաղեմ.
կամ'ի քանս ճապաղեմ. և յաղօթիցն ուն-
այն առնեմ. խստացուցանեմ զբարս մարդ-
կան. և անիծանել տամ զօր ծննդեան իւ-
րեանց. և ոմանց անիծել տամ զծնօղն, և
ծնողաց՝ զորդիսն. և քանս առ ՀԾ խօսիլ.
ուսուցանեմ զսուգ անմխիթար առնել'ի
վր մեռելոյն, և ապականել զերեսս, և
խզել զհերս, և քախել զկուրծս, և պատա-
ռել զհանդերձս և հայհոյել զՀԾ, և ան-
մխիթար սուգ առնել, մինչև հեռացուցա-
նել տամ զմեռեալն յՀՆ. ժողովեմ զմար-
դիկ'ի պատրանս և'ի պարս խաղուց. և
մոռանալ տամ զՀԾ յիշողաց, երդմամբ,
վաշխիւք, տոկոսիւք, և ալկանաք տուապե-
լոց



ZUUIP ADM.CCP

լոց զաշխարհս ամենս եմ կլեալ, բայց յաղ-
ջկանէ միոջէ կործանեցայ. քանզի տեսա-
նեմ առ սմա հանգուցեալ զքո. և առնէ
զինչ և կամի. յառաջ քան զգալ հոգւոյն
նբ, և արդ լսեմ զձայն յերկնաւորացն, և
տեսանեմ զսա զի լի է շնորհօքն նոյ։ Եւ
սա է պտուղն արդարութե. զի ոչ արուս
եակ են աչք սորա. և ատամունք ոչ կաթն.
և պտուղ արդարութե շրթունք սորա. և
պայծառ է սա շնորհօքն նոյ. և այժմ նշա-
նաւն նոյ յաղթեաց ինձ. և զընկերն իմ ըս-
պան. և զիս կապեաց. և զդրունս իմ փշրեց
և յատակեաց. և ես այսպէս լամ զի 'ի հըն-
գէ տասան ամեայ աղջկանէ միոջէ յաղթե-
ցայ. և զհայր նր և մայր և զամ ազգատոհ
մին ես եմ խաբեալ և կորուսեալ. իսկ սա
զհետ երթալ քի, կապեաց զիս. և զամ
ընկերս իմ կործանեաց. արդ՝ զօրուի մեր
ոչինչ է զի, զի յաղջկանէ միոջէ յաղթեցաք։
Աբեն մարիանէ ասէ ցդեւն. ուր է ծը-
նունդ քո ասա ինձ. ով ուստոյց քեզ պատե
րազմիլ ընդ նբցն նոյ։ Ասէ դեւն՝ լուսաւոր
են կամք քո. զիարդ է առ քեզ հոգին նբ՝
ասա ինձ, և ես ասեմ քեզ զամ։ Յայնժամ

ասէ ՅԲՆ Մարիանէ. լռեա՛ պիղծ՝ զի ոչ կամիմ լսել բան 'ի բերանոյ քումմէ. և խլկոյն կապեաց զդէն նշանաւ ՅԲ խաչին. և 'ի բանտին պատառեցաւ երկիր և էարկ ըզնա անդ, և ասէ՝ երթ 'ի խորս անդնդոց մինչև յօրն դատաստանին և 'ի քի գալուստն։

Այ 'ի վաղիւ անդր դատաւորն հրամայեաց ածել առաջի իւր զՅԲՆ Մարիանէ, երանելին մինչ գայր 'ի բանտէն, կնքեաց զինքն նշանաւ ՅԲ խաչին քի, և ժողովուրդք բազումք գային տեսանել զնա, թէ զինչ լինիցի։ Յայնժամ ասէ լիպրիանոս դատաւորն ցՅԲՆ Մարիանէ. լուր ինձ և երկիրպագ չոգոց իմոց։

Պատասխանի ետ ՅԲՆ Մարիանէ, քեզ պարտ է երկիրպագանել ՅՍ իմոյ, և սիրելի լինիլ առաքելոց և մարգարէից, քան թէ պաշտել զկուռս անմռունչս։ Այս բարկացաւ դատաւորն և ասէ. կախեցէք զդա և քերեցէք, և այրեցէք ջահիւք. և արարին ոչ հրամայեաց նՅ. և այրեցին զմարմինն։ Իսկ նա աղօթէր ասելով՝ անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ զմեզ 'ի հան-

գիստ քոյ • փորձեցեր զիս, և ոչ գտեր յիս անիրաւութիւն։

Եւ Իսկոյն կապեցան ձեռք դահճացն ոչք տանջէին զնա • ասէ դատաւորն՝ լուր ինձ Մարիանէ, և երկիրպագ Յաստուծոյն • և եթէ Մարիանէ ասէ՝ ոչ է պարտ երկիր պագանել Յաստուծոյ խլեաց և անխօսից • վասն զի կնքեաց քո զհոգի և զմարմին իմ ոգի մարգարիտ՝ սքանչելի փառաւք իւրովք։

Յայնժամ հրամայեաց դատաւորն, սան մի մեծ ընուլ ջրով • և ջեռուցանել հրով յոյժ • և կապել զոտս և զձեռս նոր • և հեղձուցանել զնա յեռանդն հրոյն • և սպասաւորքն արարին ոգի և հրամայեաց նոցա։

Եւ Եթէ Մարիանէ հայեցաւ յերկինս և ասէ • որ բնակեալդ ես յերկինս քո՝ ՈՒԾ, լոյծ զկապանս իմ • զի քեզ մատուցից պատարագ օրհնութեան • և օրհնեցից և սաղմոս ասացից քեզ ՈՐ թագաւոր փառաց • և եղիցի ջուրս այս ինձ 'ի մկրտութիւն • զդաստացն զիս 'ի փրկութեան քում • և եկեսցէ առիս հոգիդ ՈՒԾ, և սրբեսցէ զջուրս զայս առ 'ի մկրտուն ինձ, և զգեցո ինձ զդեստ անապական • և հաստատեա զիս 'ի հաւատս ա-

ռաքինուե՛ , և լուսաւորեա՛ զմիտս իմ . և
լուսա՛ զիս ջրովս այսուհիկ , և ընդեա՛ զմեղս
իմ , զի մկրտեցայց . յանուն հօր և որդւոյ
և հոգւոյն ՝ն՚ջ . և քեզ փառք յաւիտեանս։

Եւ նոյն ժամայն եղև շարժումն մեծ .
և էջ աղաւնի մի յերկնից . և ունէր պտուղ
ձիթենւոյ ՝ի բերանի իւրում . յայնժամ
լուծան կապանք նր . և ել ՝ի ջրոյն փառա-
աւորելով զՅա՛ , և ասէ . Սոր թագաւոր փա-
ռաց զվայելչուի զգեցաւ . Սոր զօրուեց՝
լուսաւորեցեր և արբեցուցեր ինձ յաղբե-
րեդ բժշկութե՛ . փրկեցեր զիս փրկիչ աշ-
խարհի , և ողորմեցար աղախնոյ քում . և
եղև ձայն յաղաւնոյն և ասէ . Ե՛կ մարիամ՝
և հանգիր յարքայութի՛ քի՛ ՝ոյ . զի անապա-
կան և անթառամ պսակացն արժանի եղեր .
երանի է քեզ , զի զկուսութիդ քո ամբողջ
պահեցեր ։ Եւ առ ժամայն հաւատացին
յՅա՛ արք և կանայք հազար ոգիք ։

Եւ յայնժամ անօրէն դատաւորն հրա-
մայեաց սպանանել զամենեսեան՝ որք հա-
ւատացին յՅա՛ . ընդ նոսին և զՅա՛ն մարիա-
նէ հրամայեաց գլխատել . և իբրև հանին
արտաքոյ քաղաքին , ասէ դահիճն ցՅա՛ն՝

յառաջ կալ զպարանոց քո զի հատից զգը
լուխ քո. և ինձ աղօթս արա՝ զի տեսանեմ
մերձ առ քեզ զքո բաղու�հրեշտակօք։

Ասէ Մարիանէ, եթէ կամիս եղբայր՝
մնա ինձ սակաւիկ մի, և արարից աղօթս
վասն քոյ. և մինչ ամբարձ դահիճն զսուրն
աղօթեաց Մարիանէ և ասէ, Ո՛չ՝ որ զերկինս և զերկիր հաստատեցեր՝ լուր ձայնի
աղաչանաց իմոց. զի որք յիշեն զիս և կարդան և կամ գրեն զգիր չարչարանաց իմոց՝
ջնջեսցին մեղք նոցա։ Եւ որք յուսով փա-
փագին 'ի վկայարանս իմ գալով՝ կատարեսցին խնդրուածք նոցա. և որք անկանին 'ի
դատաստան և 'ի գործս ահագինս, և յիշեսցեն զիս զտառապեալս, փրկեա զնոսա յամ
վտանգից նոցա։ Եւ որք յիշեն զանուն իմ 'ի
վկայարանս, և որք գրեն զչարչարանս իմ,
լուր սոր՝ և շնորհեա նոցա զհոգիդ սբ։

Եւ նոյն ժամայն եղև շարժումն մեծ.
և որք շուրջն կային. ոչ կարէին հայիլ 'ի
նա. զի քո 'ի նմանուն աղաւնւոյ էջ առ
նա. և լոյս մեծ ծագէաց նմա. և ետես
բաց երեսօք զերն փառաց. և ասէ սոր ցմա-
րիանէ. ողջոյն քեզ զօրական իմ. այժմ

զօրացիր հաւատարիմ ծառայ։ Եւ երա-
նելին Մարիանէ ընթացաւ յոտս ոտն և
համբուրեաց օրհնելով. և ասէ՝ Տէր ոծ-
ամենակալ՝ աղաչեմ զքեզ, շնորհեա ըզ-
խնդրուածս իմ. և լուր աղաչանաց քո. և
տուր հանգիստ ամենեցուն որք կարդան
առ քեզ։

Եւ ասէ որ՝ զոմ խնդրուածս քո կա-
տարեցից առաջի հրեշտակաց իմոց։ Եւ
ասէ մարիանէ՝ աղաչեմ զքեզ որ, այժմ
լուր ինձ՝ և կատարեա զխնդրուածս իմ.
զի որք կատարեն զյիշատակս իմ, շնորհեա
նց զթողութիւն մեղաց. և որք 'ի պատերազմի
յիշեն զանուն իմ, պահեա զնս. և շնորհեա
նց՝ յաղթել թշնամեաց նց։

Եւ ասէ որ՝ երանելի է զոր դու յիշե-
ցեր յաղօթս. և զորս ոչ կարուցեր յիշել՝
զայն ևս շնորհեցից քեզ. և որք լսեն և գան
փափագանօք 'ի վկայարան քո, կատարեմ
զխնդրուածս նոցա. և որք սպասաւորեն
նշխարաց քոց, և կատարեն զտօն վկայութեանդ
քոյ, ոչ յիշեցից զյանցանս. և երանի է
քեզ և նոցա 'ի չարչարանս քո՝ զոր դու
յիշեցեր։

Ի.ՐԴ ուր և հանդիպի նշխար քո՝ և որք գրեն զգիր չարչարանաց քոց և դնեն 'ի վերգլխոց իւրեանց, և աղաչեսցին բոլորով սրտիւ, կատարեցից զխնդրուածս նց. և եղեցի Թողութի մեղաց նց. և հրեշտակք առցեն զգլուխդ քո. և տարցեն զՀոգիդ քո 'ի դրախտն. և մարմինդ քո կացցէ յերկիրս վա՜ բժշկութիւն մարդկան։

Ա՜ անդէն դահիճն ձգեալ զսուրն ի հատ զպարանոց նր. և այսպէս կատարեցաւ աբն մարիանէ 'ի յուլիսի. ԺԸ. 'ի փառս քի՜ այ, որում փառք յաւիտեանս ամէն։

---

## Սրբոյն Եփրեմի, յաղագս խոնարհութեան։

I Ի.ՐԴ՝ ոչ ասէ առաքեալն. ամ խոնարհուք զմիմեանս լաւ համարիլ քան զանձինս։ Ի.ՐԴ՝ յամ ասել՝ յայտ է թէ բազում մասունք են խոնարհութեան. են ոմանք՝ որ սակաւ ինչ մասն ունին խոնարհութեան. և են՝ որք բազում. և այլք զամն։ Ի.ՐԴ՝ է նախ առաջին խոնարհութի՝ որ քան

զամ ոք զինքն անարժան համարեսցի , ոչ մաքսաւորն՝ որ 'ի տնէ գովեցաւ ։

2 Խոնարհութիւն է և հեզանդութիւն՝ որ զինքն 'ի Ծառայի կարգի ունի և սպասաւորէ ընկերին . ոչ ասէ առաքեալն . || հեզանդեցարուք միմեանց երկիւղիւն քրիստոսի ։)

3 Խոնարհութիւն է և սուգ և արտասուք՝ որ համարի զինքն 'ի վարձկանի կարգի . թէպէտ և առնէ առաքինութիւն . ոչ և տրն ասէ թէ . || յորժամ զամենայն առնիցէք , ասասջիք եթէ Ծառայք անպիտանք եմք ։

4 Խոնարհութիւն է՝ որ համբերէ եղբօրն 'ի ժամ բարկութեան . և զինքն համարի յանցաւոր . քանզի զայրանալ և ընդդէմ դառնալ հպարտութիւն է . ոչ ասէ սողոմոն . || այր ամբարտաւան՝ ոչ կարէ համբերել պատժոց ։

5 Խոնարհութիւն է և լռութիւն՝ որ ոչ համարի զինքն յառաջ կալոյ արժանի , և խօսիլ առաջի բազմաց . ոչ և տրն ասէ . || որ յանձնէ խօսի , զփառս անձին իւրում խնդրէ ։

6 Խոնարհութիւն է՝ յորժամ զընկերն մեծարեն և զքեզ անտես առնեն , դու չտրտմիս և չտրտնջաս . այլ ասես խոնարհութեամբ , թէ ես այժմ չեմ բաւական զոր ունիմ .

ոչ և ասէ սողոմոն. || մի՛ ձկտիր ընդ մեծամեծս. այլ 'ի չափու կալ զանձն քո. և առաջի թոն շնորհս գտցես։

7 Խոնարհութիւն՝ որ ոչ ունի զընկերն 'ի ծառայական կարգի. այլ ինքն նմա սպասաւորէ. ոչ և ասէ թոն. || որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել։

8 Խոնարհութիւն՝ յորժամ տեսանես զզյանցանս ուրուք և ոչ բամբասես. այլ զայս ասես, թէ ես յանցաւոր եմ. զայլոք ոչ կարեմ դատապարտել. ոչ և թոն ասէ. || մի՛ դատէք, և ոչ դատիցիք։

9 Խոնարհութիւն սիրել զընկերն. քանզի սիրոյ պատուիրան են այսոքիկ, խոնարհիլ ընկերին, հիւանդութեան՝ ցաւակից լինիլ. 'ի տրտմութեան՝ մխիթարել. զանձն 'ի ծառայութիւն տալ. իսկ հպարտն զայս ոչ առնէ. և ոչ համարի զեղբայրն արժանի՝ խոնարհիլ 'ի նա և սպասաւորել նմա. այլ անարգ համարի. և զինքն գերը 'ի վերոյ քան զնա, վա՜ այնորիկ գրեալ է. || թէ սէր իբրև զաղ համեմիչ է թամ առաքինութեանց. և թարց նը 'ի բաց ընկեցեալ է թամ առաքինութիւն։

10 Խոնարհութիւն՝ որ զառաքինութիւն մինչ

առնես, ոչ ածես զմտաւ, և հպարտանաս։
ոչ փարիսեցին այլ զոր մեղանչես՝ զայն ա-
ծես զմտաւ։ և զքեզ յանցաւոր համարիս
և խոնարհեցուցանես զանձնդ։ ոչ առա-
քեալն յանցաւոր համարէր զինքն և ասէր,
հայհոյիչ էի և թշնամանիչ։ և դարձեալ՝ ե-
թէ, զառ 'ի յետոյն զառաքինութիւն մո-
ռացեալ եմ, և յառաջադէմն նկրտեալ։
11 Խոնարհութիւն՝ յորժամ փառաւորեն
զքեզ մարդիկ, և պատիւս տան, դու ոչ
համարիս քոյմ անձինդ արժանեաց։ այլ
զանձ փառաւորես։ և գոհանաս զարարչէն
թէ՝ այս 'ի քո ողորմութիւդ եղև, և ոչ ըստ
իմոյմ արժանեաց։ ոչ ասէ սողոմոն։ || որ-
չափ 'ի մեծութիւն հասանիս, 'ի խոնարհու-
կալ զանձն քո։ և առաջի տեառն գտցես շնորհս։
12 Խոնարհութիւն՝ յորժամ վշտի հանդի-
պիս, կամ նեղուի հասանէ 'ի վերայ քոյ, և
անարգէ զք զքեզ, դու ոչ տրտմիս։ այլ
գոհանաս զայդ, թէ ես ոչ այսչափ միայն,
այլ բազում պատժոց արժանի եմ ըստ ի-
մոյմ մեղացս։ և օրհնեալ է ած՝ որ արժա-
նի արար զիս նեղուիլ յանցաւոր կեանս, և
'ի մահկանացու մարմնոս։ ոչ ասէ առա-



քեալն։

քեան։ ‖ Հաճեալ եմ ընդ նեղուիս, և ընդ
վիշտս, և ընդ չարչարանս, և յորժամ տկա-
ռանամ, յայնժամ զօրանամ։

13 Խոնարհուի է զդենուլն զգծուծ հան-
դերձ։ որ ոչ համարի զինքն արժանի պատ-
ուական զդեստու։ քանզի մարդիկ փառս
'ի հանդերձից որսան։ ոչ և գրեալ է։ ‖ Մի՛
զգեստիւք խնեշասցուք կակղովք և շուրջ
պճնեցելովք։ որոց գեղեցկութիւնն է ա-
պաշնորհ։

14 Խոնարհուի է՝ յորժամ յերկիր հա-
սանիս, գոհանաս զայս, թէ բազումք 'ի
մարդկանէ՝ 'ի աչս իսկ՝ հալածեալք և կա-
ղօտ և անհանգիստ են։ իսկ ես՝ որ զհող ոչ
եմ արժանի կոխելոյ, հաց ետուր։ և կերա-
կուր և սէր երբարց։ և զօրս խաղաղութ-
անցուցեր։ այդ քո ողորմութի է։ և ոչ ըստ
իմում արժանեացս։ ոչ և մարգարէն ասէ։
‖ ով եմ ես ո՛ր իմ ո՛ր՝ որ այսչափ սիրեցեր
զիս։

15 Խոնարհուի է՝ յորժամ կամիս առա-
քինութի առնել, ոչ համարիս զքեզ բաւա-
կան սկսանիլ և կատարել, այլ նախ յայ-
խնդրեա՛ օգնականութի, թէ օգնեա՛ տկա-



ռու-

ղուԹես իմում. զի կարացից առնել զհա-
ճոյս քո. ոչ և նոքն ասէ. || որ հաստատեալ է
յիս և ես 'ի նա, նա բերէ պտուղ յոյժ.
առանց իմ ոչ ինչ կարէք առնել։

16 ԽոնարհուԹի է՝ յորժամ զայրանայ
սիրտդ, դու արգելուս զցասումն. և ոչ
համարիս զքեզ ընդդէմ դառնալ եղբօրն.
ոչ ասէ սողոմոն. || յողոք քանի և եԹ կայ
խոնարհամիտն. իսկ հպարտն և յանդուգն
տայ պատասխանի։

17 ԽոնարհուԹի է. որ ոչ միայն զայնոսիկ
սիրես, որ երևելիք և փառաւորք են 'ի մարդ-
կանէ, այլ յաղքատն խոնարհիս. և զա-
նարգն մեծարես. և զպանդուխտն միսիԹա-
րես. ոչ և նոքն առնէր. պիղատոս խօսէր,
և նա չտայր ինչ պատասխանի. իսկ ընդ ա-
ւազակին բաղում քաղցրուԹիւն խօսէր. և
պարգևս տայր. և յորժամ կոյրքն աղաղա-
կէին, զտեղն առնոյր և հրամայէր կոչել.
և մերձեցեալ յաչս նոցա, բանայր։

18 ԽոնարհուԹի է՝ որ ոչ վարիս հանապազ
զքո կամօք, և զոր դու իմանաս՝ զայն մի-
այն գիտես ուղիղ, այլ խոնարհիս և հար-
ցանես. և խրատ ընդունիս յառաջնորդաց

և՝ ի գիտնականաց. ոչ մովսէս՝ որ խրատուն
յոթորայ ոչ անլուր եղև. և ոչ ասաց եթէ
ես մրդրկ եմ. և չեմ քո բանիցդ կարօտ։
19 Լսոնարհուի է՝ որ յամ դժրօղ իրաց
զարհուրիս և պատրաստիս. և ոչ հպարտա-
նաս և ասես, եթէ ինձ ով կարէ յաղթել.
վա՜յ այսորիկ ասէ սողոմոն. || փչրեն զսիրտս
իմաստնոց սպառնալիք. իսկ հպարտն յանձն
ապաստան յորոգայթ անկանի։
20 Լսոնարհուի է՝ յորժամ կատարես ա-
ռաքինուի, եթէ աղօթս, եթէ պահս, եթէ
ողորմուի, եթէ այլ ինչ, ոչ խորհիս և ա-
սես, թէ զայս յիմ զօրուէն կատարեցի,
այլ յայ օգնականութէն. ոչ ասէ առա-
քեալն. || ոչ ես, այլ շնորհքն ՝այ որ յիս։
21 Լսոնարհուի է՝ որ ոչ դու քեզէն մատ-
չիս յառաջ և առնուս աստիճան առաւել
քան զոր ունիսդ, այլ կոչեցեալ յառաջնոր
դաց կալցիս. վա՜յ այսորիկ ասէ տուաքեալն.
|| ոչ որ զանձն ընծայեցուցանէ նա է ընտ-
րեալ։ ԼՏ դարձեալ գրէ. || անձամբ առեալ
պատիւ. և ոչ յայ։ և մարգարէն ասէ.
|| ես ոչ առաքեցի. և նոքա ընթանային։

Լ.ԻԴ՝ հիմն ամառաքինութիւն խոնարհութիւն է. և յորժամ զամենակ առաքինութիւնսն 'ի գլուխս հանիցէ, յայնժամ կատարեալ լինի մարդն. և ամ ոչք խոնարհութիւն հաճոյ եղեն ոչ. ոչ աբրահամ խոնարհ էր, և ասէր. հող եմ և մոխիր. և վասն այսորիկ գլուխս նահապետացն եղև։ Լ.ու դաւիթ ասէր. ես որդն եմ և ոչ եմ մարդ, և այլն. վասն այսորիկ ընտրեցաւ յոյ։ Լ.յոպս ասէ և եսայի. վայ ինձ, զի մարդ եմ. և պիղծ շրթունս ունիմ. և վասն այսորիկ ոճաբան կոչեցաւ 'ի մարգարէսն։ Լ.յսպէս և պետրոս ասէր. 'ի բաց գնա յինէն տէր. զի այր մեղաւոր եմ ես. և վասն այսորիկ վեմ կոչեցաւ, և զփականս երկնից ընկալաւ։ Լ.յսպէս և յոհաննէս ասէր. չեմ արժանի լուծանել զկրացս կոշկաց նոցա. վասն այսորիկ մեծ կոչեցաւ 'ի մարգարէսն. և արժանի եղև զքս մկրտելոյ։ Լ.յսպէս և պօղոս ասէր. ես եմ տրուպն առաքելոց. և վասն այսորիկ յերկինս թռեաւ. և դրախտին եղև տեսօղ։ Լ.ԻԴ՝ խոնարհութիւն է գլուխ առաքինութեան. վասն այսորիկ ասէ մարգարէն. պատարագ տայ հոգի խոնարհ։ Լ.ու մերձ է

ՈՐ առ այնոսիկ՝ որք մաշեալք են սրտիւք։
և զխոնարհս հոգւովք կեցուցանէ։

Եւ սողոմոն ասէ։ Ած ամբարտաւանից
հակառակ կայ՝ տայ զշնորհս խոնարհաց։
Եւ Եսայի ասէ բանիւ ՏՈՆ։ Ես յո՛ հան-
գեայց, եթէ ոչ, 'ի հեզս և 'ի խոնարհս։ և
յայնոսիկ՝ որք դողան 'ի բանից իմոց։ Եւ
նոյն ինքն ՏՐՆ ասէ, որ բարձրացուցանէ
զանձն, խոնարհեսցի։ և որ խոնարհեցուցա-
նէ զանձն՝ բարձրասցի։ Եւ առաքեալն
ասէ։ Մի՛ ամբարտաւանիք։ այլ՝ ընդ խո-
նարհս զիջանիցիք։ Եւ 'ի վարդապետացն՝
անչափ կայ վկայութիւն ՎՈ խոնարհութեան։ զի
չիք այնպիսի սիրելի ՅՍ, ոչ սիրտ ՏԲ։ և
հոգի խոնարհ։

Եւ քեզ փառք յաւիտեանս։ Ամէն։

## Հրաժարում։

Հրաժարիմք ի սատանայէ և յամենայն խաբէութենէ նոր. ի պատրանաց նոր. ի խորհրդոց նոր. ի գնացից նոր. ի չար կամաց նոր. ի չար հրեշտակաց նոր. ի չար պաշտօնէից նոր. ի չար կամարարաց նոր. և յամենայն չար գործս նոր հրաժարելով հրաժարիմք։

Օ՜այո էրէցս հրկնէ՝ էրէս ի յարևմուտս՝ և յեռս ի հոր ոնէլով։ և ապա դառնայ յարևելս, և ասասանի զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, բացագլուխ և յեռանամած հէրպէ՝, և ասէ։

Խոստովանիմք և հաւատամք ամենակատար սրտիւ զհայրն. Յ՚ն անեղ, անծին, և անսկիզբն. այլ և ծնօղ որդւոյ և բղխօղ հոգւոյն սրբոյ։

Հաւատամք զՄանն Յ՚ն, անեղ՝ ծնեալ՝ և սկսեալ՝ ի հօրէ նախ քան զյաւիտեանս. ոչ յետոյ և ոչ կրտսեր. այլ որքան հայրն հայր՝ ընդ նմին և որդին որդի։

Հաւատամք զոբ Հոգին՝ անեղ՝ անժամանակ. ոչ ծնեալ՝ այլ բղխեալ 'ի Հօրէ. էակից Հօր և փառակից որդւոյ։

Հաւատամք զԱրարդուին սբ՝ մի բնութիւն, մի ոճ. ոչ երեք ոճք, այլ՝ մի ոճ. մի կամք. մի թագաւորութիւն. մի իշխանութիւն. արարիչ երկնից և աներևութից։

Հաւատամք յԵկեղեցի սբ զԹողութիւն մեղաց հաղորդութիւն սբց։

Հաւատամք զմինն յերից անձանց ըզքանն ոճ՝ ծնեալ 'ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. 'ի ժամանակի ելեալ յոճս ինկոյն Պարկամ. առեալ յարենէ նորա՝ միաւորեաց ընդ իւրում ոճս. ինն ամսեայ ժուժկալեալ յարգանդի անարատ կուսին. և եղև ոճն կատարեալ՝ մարդ կատարեալ. հոգւով և մտօք և մարմնով. մի անձն մի դէմ և միաւորեալ մի բնութիւն։ Զոճն մարդացեալ առանց փոփոխման և առանց այլայլման. անտեսանելի յզուի և անապատելոյն ծնունդ. ոչ ոչ է ակիզբն ոճուն՝ և ոչ վախճան մարդկութեանն։ (զի յաքս երկիր և այսօր՝ նոյն է յաւիտեան։)

Հաւատամք զոր մեր յաքս շրջեալ 'ի

զեր երկրի։ Յետ Հ ամաց եկեալ՝ի մկրտու-
թիւն։ Հայր՝ի վերուստ վկայեալ՝ դա՛ն
Որդի իմ սիրելի և Հոգին աբ աղաւնա-
կերպ իջեալ՝ի վրա նր։ Փորձեալ՝ի սատան-
և յաղթեալ նմա։ Քարոզեալ մարդկան
զիրկուն։ Բ. շնաառեալ մարմնով, վաստա-
կեալ, քաղցեալ, և ծարաւեալ։ Յետոյ
եկեալ կամաւ՝ի չարչարանս. խաչեալ և
մեռեալ՝ մարմնով. և կենդանի ուծուքեն։
Թաղմինն եղեալ՝ի գերեզմանի՝ միաւո-
րեալ ուծուքեն. և Հոգւաքն իջեալ՝ի
դժոխս՝ անբաժանելի ուծուքեն։ Բարո-
զեալ հոգւոցն՝ աւերեալ դդժոխքն և ազա-
տեալ զհոգիսն։ Յետ երից աւուրց յա-
րուցեալ՝ի մեռելոց և երևեալ աշակերտացն։
Հաւատամք զոր մեր յա՛ր քա՛ն նովին մարմ-
նովն համբարձեալ յերկինս և նստեալ ընդ
աջմէ հօր։ Բ. յլ և գալոց է նովին մարմնովն
և փառաւք հօր՝ի դատել զկենդանիս և ըզ-
մեռեալս։ Որ և յարութիւն մարդկան։
Հաւատամք և զհատուցումն գործոց. ալ-
դարոցն կեանք յաւիտենական. և մեղաւ-
ոացն տանջանք յաւիտենական։

շարժուք մարմնոյս և զազրագործուք 'ի
պէս պէս՝ ախտս. հեշտալուք լսելեացս.
արատուք աչացս. ցանկուք սրտիս. խգուք
